

ակրէ: Տ. Մոլոէս եպիս. Պելէճիկ գառնալէ յետոյ՝ Գաւառու. Վարչութեան երկամեայ շրջանին լրացած ըլլալը նկատողութեան առնելով, Գիւտ Խաչի տօնին օրը իր նախագահութեան տակ Գաւառու. Ժողով գումարեք է, որուն 21 անդամներէն 17 ը ներկայ գանուեք են և նախորդ Վարչութեան համարատուութիւնը կարդացուելէ և վաւերացուելէ յետոյ, ըստ օրինի Գաւառու. Ժողովոյ դիւան ընտրութիւն կատարուելով, տեղեկագիրը Պատրիարքարան զըրկուեք է վաւերացուելու համար, Տեղոյն վարժարժարանին շինութեան արտօնութիւնը ստանալու վերաբերեալ դուռդողութեանց համար Աւագերէց Խորէն քննյ. Պոլիս զրկուած է:

## ԿԻՊՐՈՍԻ ՀԱՅՔ.

— Սուրէն. գրում են. «Հայերը այսուեղ ունին երկու եկեղեցեց, մին քաղաքին մէջ և միւսն ալ քաղաքին մօտ գտնուող Հայոց գերեզմանատան մէջ: Առաջինը շինուած է յանուն Ս. Աստուածածնի, Ասիկայ հին գեղեցիկ եկեղեցի մըն է, որուն յատակը ժամկուած է լատինական գրեք կրող տապանաքարերով, որմէ կաթելի է հետեցնել թէ՝ սոյն եկեղեցին ատեն մը Լատինաց ձեռքը անցած է, բայց յետոյ ժամանակի ընթացքին մէջ կրիին Հայոց ձեռքը անցած է: Եկեղեցոյ շրջափակին մէջ կայ տղայոց և աղջկանց երկսեռ վարժարանը և առաջնորդարանը, Եկեղեցին իր պաշտօնեաներով, դպրոցներով միասին կը կառավարուի անշարժ կալուածներու հասոյթներով, որոնք մեծ մասամբ կտակուած են Ս. Մակարայ վաղեմի վանահայրերէ, որոնք զբեթէ բոլորն ալ երուսաղէմի Ս. Յակովիթեանց միաբաններէն եղած են և ատոնց շնորհիւ է, որ եկեղեցին կարողացած է միշտ պայծառ մնալ ու պահպանել տեղաբնակ Հայ փոքրաթիւ ժողովուրդը, որ վարժ չէ եկեղեցւոյ կամ դպրոցի գրամ տալ կամ զոհողութիւն մը ընել: Եթէ այդ կտակները ըլլալային, անտարակոյս փակուած պիտի ըլլալային թէ՛ եկեղեցին և թէ դպրոցները, և ցրուած ու օտարներու հետ խառնուած պիտի ըլլար տեղացի Հայ ժողովուրդը:

## ԱՄԵՐԻԿԱՅԻ ԹԵՄ


«Սուրհանդակը քաղուածօրէն տպել է Թէ՛ը Փրէզնո Մօնիսկ թերթի արած Հայոց նորակառոյց եկեղեցու օծման նկարագրութիւնը: Փրէզնոյի (Ամերիկա) եկեղեցին օծուել է հոկտեմբերի սկզբին Գերապատիւ Սարամեան Տ. Ցովսէփ եպիկոսուսի ձեռքով մասնակցութեամբ Ահարոն վ. Մելքոնեանի և երկու սարկաւագների: Ներկայ են եղել բազմաթիւ ամերիկացիներ, ի միջին

այլոց Յ. Գիլեան հայ երիցականների քարոզվէր: «Օծման արարողութիւնը շատ սրտագրաւ էր: Քանիներոք դարու արշալոյսին մէջ շատ հետաքրքրական է տեսնել օծումը հին եկեղեցին մը—այնչափ հին, որչափ է Քըմառնէսութիւնը—այն միենոյն արարողութիւններով և ծէսերով, որոնք դարեք առաջ կատարուած էին: Աւետարանը քարողուած էր այդ ժողովուրդին Թագէոս և Բարդուզիմէոս առաքեալներուն ձեռքով: Մարդ չի կընար իր սրանչացումը զսպել այն հին կրօնական հաստատութեան մասին, որ մինչեւ այսօր կանգուն կը մնար:

Ապա յիշեալ թերթը նկարագրում է օծման արարողութիւնը: Սրբազն եպիսկոպոսը օծման կարգը կատարելուց յետոյ՝ մի որտառուց քարոզ է խօսացել: «Եթէ մոռացաց զքեզ երուապէմ, մոռասցի զիս աջ իմ՝ Սաղմ. ՃԼԶ. ըլնաբանով:

Հանգիսից յետոյ՝ հոգաբարձուներից մէկը կարգացել է եկեղեցու շնորհեան տեղեկագիրը, որից իմանում ենց, թէ 3800 գոլ. ծախս է նըստել, սակայն արհեստաւորներից շատը ձրիաբար շաբաթներով աշխատել է: Առաջուց հաւաքուած է եղել միայն 2300 գոլ., իսկ մնացած 1500 գոլ. պարտքով է հոգացուած: Բայց հէնց նոյն օրը՝ օծման հանգիսից յետոյ՝ Սարանեան սրբազնի յորդորներով հաւաքուած է 1300 գոլ. պարտքը ծածկելու համար ։ Ն. Գերապատութիւնն ալ կըսրի գումարով մը մասնակցեցաւ հանգանակութեանս:

— Նոյն օրը, Լօրէնսի մէջ Սրբազն Սարանեան պատարագ մատուցանելով՝ հոգեհանգիստ կատարել է ուսւահայ բարերար Գրիգոր Զանշեանցի յիշատակին:



## ՄԱՏԵՆԱԼՈՍՈՒԹԻՒՆ

\*\*\*\*\*

Ա.

ՔԱՀԵՐՆԵՑՈՒՄՆ ԽՆԴԻՔ—համառօս ակնարկ Արիստակիս եպիսկոպոսի\* (Սեղրակեան):

Կերապատիւ հեղինակը յայտնի է իրբե-

\* Պետք է լիներ՝ արժեկանութիւն:

այն հազուագիւտ հոգեորականներից մէկը որ քահանայական խնդիրը անկաշառ սրտով իւր մոածութիւնների նիւթ է դարձել իւր գործունեւթեան առաջին օրերից մինչև մեր ժամանակը: Զանապան պաշտօններ վարելով շատ անգամ բարձր զիրք ունենալով և մասաբէս ոգեօրուած, նա հնար ունիր այն հին խնդիրը բաղմակողմանի ուսումնասրբելու, ծանր կշռելու, լրւաբանելու և նոր տեսակետներից շրջադաշելու:

Եւ ի՞նչ տիսուր աեսարան է ներկայացնում նորա զիրքը: Ընթերցողը քսամնելով քստմում է, թէ մեր տուած բացուած այն ի՞նչ դժոխային վիճ է, ուր որ քահանաները տղեա, առաջնորդները կաշառակեր, ժողովուրդը թմրած է: Այդ սե էջերը կարդալիս՝ ուզում ենք փաքը ի՞նչ շունչ քաշել, լուսոյ մի նշոյլ աեսնել: զբքի ամենայն երեսում սպասում ենք փրկութեան յոյս սպասում ենք, որ չեղինակը վերջապէս այդ գարջուրելի պատկերը պիտի լրացնէ, և ցոյց տայ, թէ Աստուծոյ ողորմութեամբ այսօր զահի վերայ ամբարձած օւնինք մի սրտացու հովիս, մի կասարեալ քրիստոնեայ, մի մարմացեալ սեր մարմնով և հոգով ազքանների համար, մի օրինակ և հայելի մեզ ամենիս համար, որ պատկերացնում է, թէ ահա օրով շատով պէտք է ընթանայ հայ քահանան: հայ առաջնորդը և հայ ժողովուրդը: Այդ խուար մթնոլորտք վարառելու համար՝ մենք սպասում ենք նորանից երկու խոսք, այն է որ ամենայն խոնարհութեամբ բացականչեր, թէ Պատրաստ արարէք զՃանապարհ Տեսան . . . որ զինի իմ գայ՝ հզօրագոյն է քան զիս և ես չեմ բաւական բառնալ զիօշիկ նորա . . .

Իսկ փոխարէնն ի՞նչ ենք կարգում, թէ ահա մի եպիսկոպոս որչափ եռանգով է մաքսում երեսոյթների դէմ, թէ ի՞նչ յայտարարութիւններ և զեկուցումներ է գրել ի՞նչ գոկումնաներով է հասասում իւր չքմեցութիւնն և այլոց մեզաւորութիւնը, թէ ով ի՞նչ ակնարկ կամ չարարանութիւն է արել թէ ի՞նչպիսի մանր բաներ ի՞նչ մեծամեծ երեր են կասարել թէ համախոչ լրադիր ի՞նչ գրել է քարոզիլ թէ ի՞նչ փաստեր, փաստեր ի՞նչ գրուած է փաստական միւս, գուլու և Միլլարէկու զիւզոյ ի պատրաստել զնոսայական իմաստ և առաջնորդ ի Նուսաւորշեան Հայոց Անողիդ Ա. Էջմիածնի անօրինելի զի առաքեացին յուսումնաբանն Մէծի Աթոռոյդ երկու երեխայ ի նիմ զեզչէ Աւտէացւոյ, մի ի Զոռլու և մի ի Միլլարէկու զիւզոյ ի պատրաստել զնոսայական ի քահանայաւթիւն . . .

ի՞նքը և միշտ ինքը կամի է, ունեցելու բայց իրան հանապազ ընդզիմացել են Յ կամուողիկոս և մի Անողի և այն և այնի . . .

Մի անձի այսպիսի մարտիրոսութիւնը ինքն ըստ ինքեան խրատական բան է: Խնդիր է ծագում թէ ի՞նչո՞ւ համար զերապատիւ հեղինակը այնքան ձիգ ասրիներում այնքան անյաջորութիւնների է, հանդիսելու հականալի իւր քարոզածը, թէ քահանացու սէտար է, ընարուի դպրոցի աւարտնան Շուղի ունեցող ներից: Բոյց և այնպէս ինքը շատ գեղեցիկ օրինակով ցոյց է տալիս թէ ցաւը հայտ այդ չէ թէ զարմանը առէլչ ուրիշ անդ վնասուելու է: — Մի անգամ, երբ որ հեղինակը տակաւին երխուարդ էր և ոչնչ զժուութիւն չկար, որ միշտ արգելը է հանդիսացել մեր հեղինակի զործաւնեւթեան ինչողէս որ ինքը վկայում է, — ահա այդպիսի բարեյաջող հանգամանքներում նա ու ափացօց որդորմելի վիճակը իրեն ականատես նկարագրելուց յեաց՝ Անողին յայտրաբեց: Առ ի զառաջս տանլոյ այսպիսի անկարգութեանց և աղասիելոյ զժուուգուրդս մեր և զեկուցի ի ձեռաց այսպիսի տղեա, անբարեկարդ և անարժան եկեղեցականաց պարա է հոգալ կրթել զքանի մի մանկունս յուսմունս ու զրոց և քահանայական պարտաւորութեանց և ի բերել ժամանակին՝ ձեռնազրդել և տալ ողորմելի ժողովրդոցն այնոցիկ, օրով և ժողովուրդք միիթարեացին, և օրէնք և կարգք եկեղեցւոյ ըստ արքանույն պահպանեցին . . . վասն օրոյ ինպրեմ ի Նուսաւորշեան Հայոց Անողիդ Ա. Էջմիածնի անօրինելի զի առաքեացին յուսումնաբանն Մէծի Աթոռոյդ երեխու երեխայ ի նիմ զեզչէ Աւտէացւոյ, մի ի Զոռլու և մի ի Միլլարէկու զիւզոյ ի պատրաստել զնոսայական իմաստ և առաջնորդ ի Նուսաւորշեան Հայոց Անողիդ Ա. Էջմիածնի . . . առաջարկը ընդունելով այս առաջարկութիւնը՝ պատասխանում է, «ի հետեւո՞ն յայտարարութեան Զերոյ, կատավարչական մասն Անողի Յ. Էջմիածնի . . . առաջարկը ընդունելով այսպիսի մանկանց ժողովրդականաց նիմ, Զոռլու և Միլլարէկու զիւզոյ ի պատրաստել զնոսայական իմաստ և առաջնորդ ի Նուսաւորշեան Հայոց Անողիդ Ա. Էջմիածնի . . .»

Անողին ընդունելով այս առաջարկութիւնը՝ պատասխանում է, «ի հետեւո՞ն յայտարարութեան Զերոյ, կատավարչական մասն Անողի Յ. Էջմիածնի . . . առաջարկը ընդունելով այսպիսի մանկանց ժողովրդականաց նիմ, Զոռլու և Միլլարէկու զիւզոյ ի պատրաստել զնոսայական իմաստ և առաջնորդ ի Նուսաւորշեան Հայոց Անողիդ Ա. Էջմիածնի . . .»

գաւնակ և արքանաւոր երեխայս և առաքել  
ի Ա. Եջմիածին վասն կրթելց զնոսա յեկե-  
զեցական դիսելիս ի պատրաստութիւն քա-  
հանացական կոչմանց :

Չորս երեխաներն ընսպուեցան և ուղարկուեցան (ուրիմն էտքես թէ ցաւը զարմանուեցաւ և Աւանին պիտի լուսաւորաւի), բայց Սայր Աթոռի ժառանգաւորաց զպրոցից դուքս գալուց յիշաց, նորա էտիւնակի իրանց հայցնեական չէր-դում աւանաւոյ լինելու, մէկը քահանոցացաւ Թիֆլիսում՝ և միւնիերն էլ ընարեցին ուրիշ աեզեր և սպարազմւնքներ... (Արշէ ն երեց, ուր ես, որ Ճերտապահ հեղինակից այս վայսունիւնը քո ականջով լսես): Ուրիմն աւարտման թուղթը բաւական չէ, ուրիմն հարկաւոր է, նաև վերին կոչումն, ուրիմն մեր երիտասարդները դիւզից քաղաք են փախչում՝ կամ քահանոցութիւնից խսպառ խորշում՝ են, և այս այսպէս եղել է, հեղինակի երիտասարդութեան ժամանակից սկսած ... \*

Բայց յարարերութիւնները փոխուեցան  
նախկին համերաշխութիւնը սառարարեալի և  
իշխանութիւն մէջ խօսւեցաւ։ Արքի պիտի պոպուր  
անչ և եռանդ ուներ գործելու, իսկ իր ա-  
սելով՝ Մայր Աթոռը վաղուց ի վեր սովորել  
էր վիճակային գործերին ուղղակի միջամտել  
կարգադրութիւններ անել և ուշագրութեան  
չարժանացնել նորա բաղրաները։ Եւ երբ որ  
ձևանունայն մնաց, ահա թէ, ինչ բնորոշ պատ-  
գամ ստացաւ հոգելոյն Մակար կաթողիկոսից.  
«Ասէմք ի հաւատարիմ աղեկրաց, զի Գերա-  
պատութիւն Զեր խաղաղ թագեալ ի ձե-  
ռագ զդեկ վարչութեան առաջնորդ ական պաշ-

տամանել՝ պատճառէք ստանալ ի մեջ զհաս-  
տառութիւն առաջարկեալ ի ԶԵՆԾ ծրագրի:  
Եթէ դյայտագիրն զայն համարեցաք ոչ իբրև  
ծրագիր՝ որ նորօրինակ ինչ թուի մեզ այլ  
իրրե ընդհանուր աեսութեամբ նկարագիր  
անհամանձելի գրութեան եկեղեցեաց, ումանց  
եկեղեցականաց, վահորից և զպրոցաց վիճա-  
կիդ Տփիմասց, զորս մարդէն էր Զեկ և խիստան  
պարտք՝ ընդարձակութեամբ որոք վերածել հատ-  
զեաէ ի բարեկարգութիւն առանց ինդրեւը  
է ՁԵՆԾ ԱՌԵՆՆԵՑ: Աւ եթէ հանդիպեալ է Զեր  
երբեմն զիմադրութեամց սինօղական իշխա-  
նութեան, զորմէ քանդարտէք ի Հերում յայ-  
տագրի, այդ Զեր նե յանդունութեան և ու այլ ոռմեն,  
վասն զի ・・・ Ս. Արդ՝ որովհեան ժամա-  
նակը անիշխանութեան՝ մանսամանդ ինքնա-  
կամ՝ ներգործութեանց ումանց հոգեոր պաշ-  
տօնէից անցեալ զնացին ի բաց, և քանդիթէ  
անդամիք իցեն սինօգի սրբոյ Խջմածնի թի.  
Առաջնորդք վիճակաց և թէ փոխանորդք նո-  
ցին՝ ամենեթին ընդ ծայրագոյն իշխանու-  
թեամբ միոյ Հայրապետի դորձեն և կառա-  
վարեն զեկեղեցի և ժողովուրդս նորին, Հայ-  
ոց յայում նետի, սիրելի որդիկը և եղբարք մեր՝  
ընդ որս և սիրելիից ի Տէր՝ պարտիւթ պարու-  
նեամբ սրուի և հադույց, առանց նենդութեան,  
առանց ակնառութեան կամ՝ վրէմինդրու-  
թեան և առանց պատճառարանութեանց, Քոր-  
ծէլ յէրաժաննէլուն հոգեառ շընանէ ・・・  
ուրեմն դորձեցէք՝ որ ինչ բարձին է և հաճոցն  
Առաքութեաց, որ ինչ օդտակարն է ・・・ և որ ինչ  
կարեւորագոյն յոյժ՝ ի վերականգնութեն բարոյ-  
ական անկման հոգեօրական դասուց, որով  
միայն կարէք միսիթարել զվարացեալ սիրտ մեր  
և վարձս բարեաց դասանիլ յԱստուծոյ:

Միթե ասրակայս կարող է լինել թե  
ինչ են նշանակում այս խօսքերը որ իշխա-  
նաւորը հայրապար ուղղում է իւր ասրակու-  
սած ստորագրեալին։ Խակայն այսպիսի սար-  
թանալուց յետոյց այսպէս զործելու-  
ին և կատարեալ իշխանութիւն ունենալուց յե-  
տոյց բողոքաւորը զարձեալ զիվելու թղթեր է,  
զրում գանդապում է, մեղքը աշխարհքի  
մերսոց է բարդում, ինքը առաջայ ուստին-  
ուան հոգակ մէջ է ընկնում, զծած մոգական  
շրջանից գուրս չի գալիս՝ որ քայլ տնգամ

գործէ, միշտ յիշատակելով Ֆառւստի այն խրապ, թէ.

Die That ist alles, nichts der Ruhm.

Գործն է աղջայն ինչ ունին է դաստիարակութիւնը:

Աւելի բացայաց կերպով Աւետարանը նոյն խրապ կարդում է այսպէս. «Եղբարք, ես ոչ համարիմ զանձն իմ թէ հասեալ իցեմ. բայց մի ինչ է զի զառ ի յետոյսն մոռացեալ է, և ի յառաջադեմն նկրտեալ եմ: Ուշ եղեալ ընթանամ ի կետ վերին կոչման Աւատուծոյ . . . Բազումք են, որոց կատարածն կորուստ է, և փառք՝ ամօժն իւրեանց, որը զերկաւորս և եթ խորհին: Ա. Ա. մեր առաքինութիւն յերկինս է՝ ուստի և Փրկչին ակն ունիմք: Առաքեալի պատուերով պէտք է միշտ գործել, ձեռնունայն շմալ, մոռանալ անցեալի գառնութիւնները, նկրտել դէպի յառաջ, դէպի պապան և երբէք չմոռանալ վերին կոչումք:—

Այսպէս ուրեմն յայնի է, որ անյաջողութեանց բուն արմատը՝ փառքի ծարաւով խոշընդուներից վախենալն է եղել և անգործ մնալը. և եթէ այդպէս է, ապա ուրեմն գիրք հրատարակելը անխորհուրդ էր: Եթէ գիրքը մի պարսաւագիր էր, աւելի ինքը պարսաւովք նշաւակուեցաւ, որից ոչ ոք օգուտ չունի: Եթէ ուզեց ցաւին գարման գանել մնք տեսանք, թէ ինչպէս անզօր հանդիսացաւ:

Բայց կարելի է զիրքը նոր տեսակեաներ է պարունակում: Աւազը որ հէնց այս կողմից գիրքը տկարագոյն է:—Մի օր Արարատում, տպուեցաւ Արշէն երեցի քարոզը, իսկ «Մշակի» մէջ՝ Ո՞ւ հաստիսց յօդուածը, որ տեղ արդէն բոլորը լիուլի ասուեցաւ, ինչ որ այժմ ձանձրալի կերպով խիստ երկար ու ձիգ կրկնվում է: Այն դէպքը մի սքանչելի դաս էր մեզ համար: Արդ, ինչ որ այն ժամանակ աղմկուեցաւ, որդին հօր դէմ զինելու փորձ եղաւ, միթէ հերիք չպէտք է համարուի բացմաշարչար Հայոց ազգի համար. միթէ այն մի միսիմարական հանդէ՞ս էր որ այսօր ևս ուզենանք կրկնել նոյնութեամբ:

«Թէ մի անգամ՝ արդէն լարեալ յարաբութիւնն զորպիսիս երբեմն իննդրէ, նիւթմա վիրաւորելոյ, ցուցանէ, այն զի . . . Հեղինակն արժան չղատեց իւր հրահանգիչ դրբի մի օրինակը հոգեորականների պաշտօնական

թերթին՝ Արարատին ևս ուզարկելու, այլ և խորհրդաւոր բան համարեց ամէնից ճանաչուած և յարգուած արքեպիսկոպոսին սոսկ եպիսկոպոս կոչելու, ակամայ յիշեցնելով: թէ երբեմն մի աշխարհական հիմարկ նոյնպէս արհամարհել է իրան շնորհած դքսութեան պատմիւն ու աստիճանը:

Մինչեւ որ կատարեալ համերաշխութիւն չինի, ոչ քահանայ կունենանք, ոչ պաշտօնական թերթ, ոչ դպրոց և ձեմարան . . . ի՞նչ շահ ունինք բահմանդիր հասորներ հրատարակելուց . . . Եթէ զեզուս մարդկան խօսիցիմ և զիրեշտակաց և ոչ ոչ ունիցիմ, եղէ ես իրեւ զպինն որ հնչէ, կամ իրեւ զծնծպայս որ զօղանջեն»:

Վերջապէս միթէ չպէտք է խրատուինք Առաքեալի այն խօսքերից, որ նա ուզել է մեղադէս պատահուած Գաղատացիներին. Ապա եթէ զիմեանս խածատիցէք և ուտիցէք, զգոյշ լերուք, զուցէ, ի միմեանց սատակիցիք»:

Ս. Մ.

Բ.

## Тексты и Разыскания по Армяно-Грузинской филологии. I. Ефремъ Сиринъ.

А. О дняхъ празднованія Рождества.

Б. Объ основаніи первыхъ церквей въ Иерусалимѣ.

Армянскій Текстъ съ сирійскими отрывками въ Армянской транскрипціи XII—XIII вѣка. Изслѣдоватъ, издалъ и перевель Н. МАРТЬ.

Խոշոր տառերով տպուած ընդհանուր վերնազրի տակ մեր ընթերցողներին քաջ յայտնի Պետերուրդի համալսարանի հայագիտութեան սըրոփ. Ն. Մատը այս անգամ՝ ուսումնական է. Մայր Ա. Ժոռի մատենադարանի № 919 (Կար. 899) ձեռազրի երկու հտառածը, որ վերագրուած է. Եփեմ Ասորուն: Բնագիրը խառն է, հայոց